ԱՆԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
(ՇՊՀ)

ՄՈԳԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՏԻԿ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Անտիկ աղբյուրները բավականին շատ տեղեկություններ են հաղորդում մոգերի մասին և, չնայած դրան, մինչ այսօր էլ գիտական գրականության մեջ շարունակվում են քննարկումները մոգերի ծագման, նրանց գործունեության և հին աշխարհում ունեցած դերակատարման մասին:

Քննելով սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունները՝ փորձենք հասկանալ, թե ովքե՞ր էին մոգերը, ի՞նչ գործառույթներ ունեին և ինչպիսի՞ բովանդակությամբ են հիշատակվել անտիկ հեղինակների երկերում: Հավանաբար, մոգերի մասին ամենավաղ հիշատակությունը հանդիպում ենք Հերակլիտոս Եփեսացու մոտ[1], սակայն այն համարվում է ընդմիջարկություն[2]: Մոգերը հիշատակվում են bakchois-ի, l̲ênais-ի, mystais-ի հետ[3]: Այս անուններն առնչվում

[1] Clement of Alexandria, The Exhortation to the Greeks, translated by Butterworth G. W., London, New York, Loeb Classical Library, 1919, 2.22.2.

[2] Фрагменты ранних греческих философов, ч. 1, От эпических теокомогоний до возникновения атомистики, Москва, 1989, с. 240; Lloyd G. E. R., Magic, Reason and Experience: Studies in the Origins and Development of Greek Science, London, 1979, p. 12; Graf F., Magic in the Anchient World, London, 1997, p. 21; Kirk G. S., Heraclitus, the Cosmic Fragments, Cambridge, 1954, p. 309.

[3] Bremmer Jan N., Veenstra Jan R., The Metamorphosis of Magic from Late Antiquity to the Early Modern Period, The Birth of the term ‘Magic’, Paris-Leuven, 2002, p. 2. Տե՛ս նաև De Jong A., Traditions of Magi: Zoroastrianism in Greek and Latin Literature, Leiden, New York, 1997, p. 387-388; Lloyd G. E. R., նշվ. աշխ., էջ 13:

են տարատեսակ գաղտնի պաշտամունքների, խորհրդավոր ու անհասկանալի գործողությունների հետ: Հերակլիտոսի հաղորդումներից կարելի է ենթադրել, որ մոգերին չեն ընդունել որպես քրմերի՝ տարբերություն դնելով երկուսի գործունեության ու գործառույթների միջև: Քրմերի անունը կապված էր կրոնահասարակական գործունեության, իսկ մոգերինը՝ գաղտնի ծեսերի ու կախարդանքների հետ, որոնք պայմանավորված էին նրանց նեղ անձնական շահերով[4]: Սակայն սա չի նշանակում, որ մոգերը միայն կախարդանքներով կամ գուշակություններով զբաղվող անձինք էին. ակնհայտ է, որ նրանք խորը գիտելիքների և որոշակի աշխարհաճանաչողության կրողներ էին: Նաև հնարավոր ենք համարում, որ մոգերը օժտված էին արտասովոր ընդունակություններով, ինչն էլ ստիպում էր նրանց անունը կապել տարատեսակ անբացատրելի երևույթների հետ: Բացասական երանգավորում կա նաև Սոֆոկլեսի մոտ, որտեղ մոգերի գործունեությունը ձեռք է բերում հանդիմանական-կշտամբողական իմաստ: «Էդիպ արքա» ողբերգության մեջ գուշակ-մոգի դերում հանդես եկող Տիրեսիասին Էդիպոսն անվանում է «դավադիր կախարդ, խորամանկ խաբեբա»[5]՝ կարծելով, որ ամենագետ մոգը, կաշառված լինելով Կրեոնի կողմից, իր դեմ դավադրություն է կազմակերպել[6]: Սակայն պետք է նկատել, որ սկզբում թագավորը վստահում է մոգին՝ որպես ամենագետ և հեռատես գուշակի, և միայն այն ժամանակ, երբ այլևս չի կարողանում զսպել իր զայրույթը, մոգին սկսում է անվանել կախարդ, իր արվեստի մեջ կույր- խաբեբա: Բայց այն, որ Էդիպոսը ճշմարտությունը փորձում էր պարզել ոչ թե քրմերի, այլ մոգի օգնությամբ, թույլ է տալիս խոսել մոգերի գիտակներ լինելու, ինչպես նաև արքունիքում լուրջ դերակատարում ունենալու մասին: Ասվածը

---

[4] Берснев П., Энциклопедия шаманской мудрости, Москва, 2017, с. 97.

[5] Սոֆոկլես, Ողբերգություններ, Էդիպոս արքա, թարգմ. Թոփչյան Ա., Երևան, 2016, 380: Տե՛ս նաև Bremmer Jan N., Veenstra Jan R., նշվ. աշխ., էջ 3; Kent Rigsby J., Teiresias as Magus in Oedipus Rex, U. S. A., Duke University, 1976, p. 113.

[6] Տիրեսիասի և Էդիպոսի հանդիպման վերլուծությունը տե՛ս Sophocles; Oedipus Rex, edited by Dawe R. D., Cambridge, 1982, p. 10-12.

հաստատում է նաև Կիկերոնը, որը մոգերին առանձնացնում է որպես գիտակ և իմաստուն մարդկանց խումբ[7]:

Կարծում ենք՝ մոգերին որպես կախարդներ կամ պարզապես գուշակներ ներկայացնելու փորձերը չեն դիմանում քննադատության, քանի որ սկզբնաղբյուրները հստակ ցույց են տալիս, որ մոգերը, բացի կրոնահոգևոր գործունեությունից, լուրջ դերակատարում են ունեցել նաև հասարակական-քաղաքական կյանքում: Եվ այն, որ «մոգ, մոգություն[8]» բառերը հետագայում սկսեցին նույնացվել միայն կախարդությունների, գուշակությունների և այլ գաղտնի գործողությունների հետ, անհիմն է: Տեղին է հիշել որոշ անտիկ հեղինակների հաղորդումները, որոնք թույլ չեն տալիս մոգերին վերաբերվել որպես խաբեբա-կախարդների կամ գուշակ-հմայողների: Ապուլեյոսը հստակ հաղորդում է, որ պարսիկների մոտ «մոգ» ասելով նկատի են ունեցել քրմերին, այլ ոչ թե կախարդներին[9]: Հին աշխարհում քրմերը միայն հոգևոր գործունեությամբ զբաղվող անձինք չէին, նրանք գիտության ու արվեստի գիտակներ էին, որոնք մեծ դեր ու կշիռ ունեին երկրի քաղաքական կյանքում: Նույն իրողությունը տեսնում ենք նաև Դիոգենես Լաերտացու մոտ, որը, վկայակոչելով Արիստոտելի «Մոգեր» և Դիոնի «Պատմություն» գրքերը, հաստատում է, որ մոգերը

---

[7] Марк Туллий Цицерон, О Дивинации, пер. Рижского М. И., Москва, 1985, I, 23; 46.

[8] Հայերենում նշված բառերը առաջին իմաստով նշանակում են *զրադաշտական կրոնի հոգևոր պաշտոնյա, քուրմ կամ նույն կրոնի հետևորդ:* Հետաքրքիր է նաև այն, որ մոգ բառը նույնացվում է *կախարդի, գուշակի* հետ, միաժամանակ նշված է, որ *մոգը բացառիկ հատկությամբ կամ արտակարգ ձիրքով օժտված մարդ է:* «Մոգ, մոգություն, մոգական» բառերի բացատրությունը տե՛ս Աճառյան Հ., Հայերենի արմատական բառարան, հ. Գ, Երևան, 1977, էջ 337; Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Բ, Երևան, 1976, էջ 1022-1023:

[9] Apuleius Lucius, The Apologia and Florida of Apuleius of Madaura, trans. by Butler H. E., London, 1909, 26. Տե՛ս նաև Plato, Alcibiades, trans. by Lamb W. R. M., London, Cambridge, Massachusetts, 1927, Loeb Classical Library, I, 121; Chrysostom Dio, Discourses, trans. by Crosby H. L., Loeb Classical Library, Harvard University Press, 1968, III, XXXVI, p. 40-42.

կախարդությամբ չեն զբաղվել[10]: Այս տեսանկյունից հիշատակության է արժանի նաև Եվրիպիդեսի «Օրեսթես» դրաման, որտեղ փռյուգացի ստրուկը Ելենայի (Հեղինե) անհետացումը[11] համարում է «մոգերի գործադրած հնարների կամ աստվածների կողմից նրան առևանգելու արդյունք»[12]: Փաստորեն, փռյուգացին փորձում է տեղի ունեցածը կապել մոգության արվեստի կամ աստվածների գործադրած ջանքերի հետ՝ Ելենայի անհետացումը համարելով անհասկանալի, ինչ-որ տեղ արտակարգ երևույթ, որը հակասում էր բնության օրենքներին: Թեև, առերևույթ «մոգ» բառը նույնանում է «կախարդ» բառի հետ, այնուամենայնիվ, վերջինիս գործնական կիրառությունն ավելի մեծ է: Այսինքն՝ Ելենայի անհետացումը դիտարկվում էր ոչ թե կախարդությունների, այլ ավելի շուտ մոգերի որոշակի հմտությունների արդյունք, իսկ այդ հմտությունները կարող էին արտահայտվել ազնիվ և անազնիվ ձևերով: Կարող ենք եզրակացնել, որ Եվրիպիդեսը մոգերին խաբեբաներ կամ կախարդներ չի համարում, պարզապես նրանց վերագրում է բացառիկ ունակություններ, հնարավոր է՝ գերբնական: Այդ իսկ պատճառով Ելենայի անհետացումը հակասություն է ստեղծում բնական, սահմանված օրենքների հետ, փռյուգացու համար դառնալով անհասկանալի ու տարօրինակ երևույթ:

Շատ սկզբնաղբյուրներ, մոգերին ոչ թե դրական կամ բացասական հատկանիշներ են վերագրում, այլ դիտարկում են որպես առանձին տոհմ: Այս կերպ Էսքյուլեսը հիշատակում է Արաբ անունով մեկին, որը մոգերի ցեղից էր[13] և մահացել է Սալամինում

---

[10] Диоген Лаэртский, О жизни, учениях и изречениях знаменитых философов, пер. М. Л. Гаспарова, Москва, 1979, I, 8.

[11] Պիլադեսն ու Օրեսթեսը ծրագրել էին սպանել Ելենային, բայց Ապոլոնի տեսիլքի միջոցով այդ ծրագիրը ձախողվում է. աստված նրան տանում է Օլիմպոս, որտեղ նա դառնալու էր աստվածուհի: Մանրամասն տե՛ս Еврипид, Орест, пер. И. Аннеского, т. 2, Москва, 1999, IV, 19, 1630.

[12] Տե՛ս Kent Rigsby J., նշվ. աշխ., էջ 110-111; Bremmer Jan N., Veenstra Jan R., նշվ. աշխ., էջ 3-4:

[13] Էսքիլես, Ողբերգություններ, թարգմ. Ա. Թոփչյան, Երևան, 1991, Պարսիկներ, 318:

տեղի ունեցած ճակատամարտում: Այստեղ մոգերը հիշատակվում են էթնիկական համատեքստում, ավելի կոնկրետ՝ ցեղ, տոհմ իմաստով: Ասվածը հաստատում է Հերոդոտոսը, ըստ որի, մարերը բաժանվում էին վեց ցեղի, որոնցից մեկը մոգերն էին[14]: Ըստ երևույթին, այս ցեղի ներկայացուցիչները եղել են քրմեր, որոնցից սերում էր ոչ միայն մարական[15], այլև պարսկական քրմությունը[16]: Որոշ հետազոտողներ մարացի մոգերին համարել են թուրանացիներ կամ սկյութական ցեղեր[17], որը չի հաստատվում ոչ մի սկզբնաղբյուրով: Ինչպես իրավամբ նշում է Մ. Դանդամաևը, այսպիսի կարծիքները հիմնված են մարացի մոգերի կրոնը քաղդեական աստղագիտության հետ միաձուլելու սխալ փորձերի վրա[18]: Մինչդեռ Ստրաբոնը մոգերին ներկայացնում է որպես պարսկական ցեղ[19]: Այլ աղբյուրներ ևս նշում են, որ մոգերի մեջ եղել են բազմաթիվ պարսիկներ: Ժամանակակից հետազոտողներից Ի. Ալիևը այն կարծիքին է, որ Աքեմենյանների օրոք,

---

[14] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Կրկաշարյանի, Երևան, 1986, I, 101: Տե՛ս Фрай Р., Наследие Ирана, Москва, 2002, с. 111; Элиаде М., История веры и религиозных идей, т. 1, Москва, 2001, с. 294; De Jong A., նշվ. աշխ., էջ 391:

[15] Մարական սատրապության կազմում գտնվող մագերի ցեղի՝ օրթոկորյուբանտիների հետ նրա նույնականացման մասին տե՛ս Хорикян О., Об этническом составе X сатрапии ахеменидской Персии, «Метаморфозы истории», Научный альманах, вып. 6, Псков, 2015, с. 130.

[16] Այստեղ մենք կարող ենք համեմատություն անել Հին Կտակարանի ղևտացիների հետ: Սկզբնապես ղևտացիները եղել են Իսրայելի 12 ցեղերից մեկը: Ժամանակի ընթացքում ղևտացիները, ավելի ճիշտ նրանց մի ճյուղը՝ Ահարոնը և նրա որդիները, կարգվեցին որպես քահանաներ: Այսպիսով, Ղևիի ցեղի ներսում պետք է տարբերել Ահարոնի ցեղի քահանաներին, ինչպես նաև քահանայապետին և մնացած ղևտացիներին, որոնք թեպետև սերում էին Ղևիից, բայց Ահարոնի սերնդից չէին: Տե՛ս Берснев П., նշվ. աշխ., էջ 96:

[17] Skyes P., A History of Persia, Vol. I, London, 1921, p. 99. Տե՛ս նաև Olmstead A. T., History of Persian Empire, Chicago, 1948, p. 31.

[18] Дандамаев М. А., Луконин В. Г., Культура и экономика древнего Ирана, Москва, с. 314.

[19] Страбон, География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. Стратановского, Ленинград, 1964, XV, 3,1. Տե՛ս նաև Диоген Лаэртский, I, 1.

չնայած քրմական դասը հիմնականում ներկայացրել են մարացի մոգերը, սակայն հայտնի են եղել նաև պարսիկ մոգեր[20]:

Պլինիոս Ավագը փաստում է, որ շատ պարսիկներ զրադաշտականության հետևորդներ էին և կոչվում էին մոգեր[21]: Ասվածը հիմք է տալիս ենթադրելու, որ մոգերի մեջ կային և՛ մարեր, և՛ պարսիկներ: Հնարավոր ենք համարում այն, որ պարսիկները ժամանակի ընթացքում ընդունեցին մարացի մոգերին, սովորեցին մոգության արվեստը և զրադաշտական կրոնով պայմանավորված հետզհետե ձևավորվեց պարսիկ մոգերի դասը: Ակնհայտ է, որ մարական ժամանակաշրջանում մոգերը եղել են ժառանգական քրմական կաստա՝ նման ղևտացիներին և բրահմաներին[22]: Հավանաբար, Աքեմենյանների օրոք նրանց դերն ու նշանակությունն ավելի է կարևորվել:

Գրեթե բոլոր սկզբնաղբյուրները՝ անկախ մոգերի ազգային պատկանելությունից, նրանց ներկայացնում են որպես առանձին ցեղ, որն ապրում էր որոշակի օրենքներով, փակ կենցաղով՝ շրջապատված առեղծվածային միջավայրով: Ամմիանոս Մարկելինոսը գրում է, որ մոգերի բազմաթիվ սերունդներ, լինելով նույն ցեղի ներկայացուցիչներ, հնագույն ժամանակներից մինչ իր օրերը շարունակում էին ծառայել աստվածներին: Մոգերի մասնակցությունը պարտադիր էր բոլոր արարողակարգերին, նրանց ծառայություններից օգտվում էին պարսից արքաները սրբազան ծեսերի ժամանակ[23]: Նրանք հավաքվում էին տաճարներում, փոխանակվում մտքերով և գիտելիքներով, կազմակերպում տարատեսակ քննարկումներ[24]: Միաժամանակ,

---

[20] Алиев И. Г., Очерк истории Атропатени, Баку, 1989, с. 102.

[21] Pliny the Elder, Natural History, Vol. VIII, with an English translation by Jones W. H. S., Cambridge-London, Loeb Classical Library, 1963, XXX, 1-3, p. 279. Տե՛ս Apuleius Luciusn, նշվ. աշխ., էջ 25-26; Plato, Alcibiades, I, 121.

[22] Zaehner, R. C., The dawn and twilight of Zoroastrianism, London, 1961, p. 163.

[23] Տե՛ս Ammianus Marcellinus, History, Vol. II, 1940, XXIII, 6, translated by Rolfe J. C., Cambridge M. A., p. 34-35.

[24] Марк Туллий Цицерон, О Дивинации, I, 41, 90, 91. Ըստ Կիկերոնի՝ այն մարդը, որը չէր ուսումնասիրել մոգերի կրոնն ու ուսմունքը, չէր կարող դառնալ պարսից թագավոր:

Հերոդոտոսի տեղեկությունները փաստում են մոգերի՝ երազահան-գուշակներ լինելը[25], որոնց բազմիցս դիմում էր Աստյուագեսը: Վերջինս լիարժեք վստահում էր մոգերին և կարևոր քայլ ձեռնարկելուց առաջ պարտադիր քննարկում էր նրանց հետ: Պարզ է դառնում, որ մոգերը նաև արքայի խորհրդականներն էին, իսկ մոգերի և Աստյուագեսի զրույցը վեր է հանում մոգերի՝ մարական ցեղ լինելու փաստը: Երբ թագավորը խորհուրդ է հարցնում մոգերից, նրանք պատասխանում են. «Մենք ևս մեծապես շահագրգիռ ենք, որ քո իշխանությունը կանգուն մնա: Քանզի եթե այն անցնի տղայի ձեռքը, ապա իշխանությունը կօտարվի և կանցնի պարսկին, իսկ մենք, մեդացիներս, կդառնանք ստրուկներ, և իբրև օտարազգիներ, պարսիկներից արհամարհված»[26]: Փաստորեն, ըստ Հերոդոտոսի, մոգերը մարեր էին, որոնք, որպես թագավորի խորհրդականներ, մասնակցում էին երկրի կառավարմանը: Ոչ մի կարևոր հարց առանց մոգերի մասնակցության չէր լուծվում: Հերոդոտոսի երկի այլ մասերում երևում է, որ առանց մոգի իրավունք չկար և ընդունված չէր զոհաբերություն կատարելը[27]: Զոհաբերությունների ժամանակ մոգերի պարտադիր ներկայությունը բացատրվում է նրանով, որ նրանք ունեին սրբազան տեքստերը կարդալու գիտելիքներ և հմտություններ, բացի այդ կարող էին բացատրել այն ամենը, ինչ հասկանալի չէր մյուսներին: Ստրաբոնը հայտնում է, որ աղոթքներն ու հմայությունները բոլոր տեսակի զոհաբերությունների ժամանակ պարտադիր էին[28]:

Մոգերի նույն գործառույթները ի դերև են ելնում նաև Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-ում: Բոլոր վճռորոշ հարցերում երևում էին մոգերը, այն ամենը, ինչ ընդունելի էր նրանց համար, համարվում էր

---

[25] Հերոդոտոս, I, 107; I, 108; I, 120: Մոգերը որպես երազահան-գուշակներ հիշատակվում են նաև Աքեմենյան մյուս արքաների օրոք: Այսպես, օրինակ, Քսերքսեսի տեսիլքը մոգերը մեկնաբանեցին որպես վերջինիս գերիշխանություն՝ ամբողջ երկրի և բոլոր մարդկանց վրա (տե՛ս նույն տեղում, VII, 19):

[26] Նույն տեղում, I, 120:

[27] Նույն տեղում, I, 132; I, 86; I, 120:

[28] Страбон, XV, 3, 14-15.

ճիշտ և անսխալական: Հեղինակը առանձնահատուկ կերպով ընդգծում է մոգերի «կրոնական հարցերի» գիտակներ լինելը[29]: Հետաքրքիր է, որ Հերոդոտոսի և Քսենոփոնի աշխատություններում, որոնք մեծ մասամբ նվիրված են հույների և պարսիկների ռազմական հակամարտություններին, բավականին հաճախ երևում են մոգերը՝ կապված տարբեր գործառույթների հետ[30]: Մոգերը նույնիսկ իրականացնում էին գործառույթներ, որոնք առերևույթ ոչ մի կապ չունեին կրոնահոգևոր ոլորտի հետ: Ակներև է, որ մոգերը պետական ապարատում լրջագույն դեր ունեին և շատ հաճախ իրենց գուշակություններով կամ ցուցումներով պարսից արքաներին դրդում էին ընդունել երկրի ներքին ու արտաքին կյանքին վերաբերող կարևորագույն որոշումներ:

Այս տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում Ագաթիասի հաղորդած տեղեկությունները: Ելնելով ասվածի կարևորությունից՝ պատմիչի խոսքը մեջբերում ենք ամբողջությամբ. «Այժմ բոլորը երկրպագում և փառաբանում են նրանց (մոգերին), և բոլոր հասարակական գործերը կազմակերպվում են նրանց խորհրդով ու կանխագուշակություններով: Յուրաքանչյուր անհատի, երբ գործը վերաբերում է դատարանին կամ այլ դեպքերի, նրանք պատվիրում են այն, ինչ պետք է անել: Եվ ընդհանրապես, պարսիկների մոտ ոչինչ չի ճանաչվում օրինական և արդարացի, եթե դա հավանության չի արժանացել մոգերի կողմից»[31]: Ինչպես արդեն նշել ենք, մոգերի գործառույթները դուրս են գալիս կրոնահոգևոր ոլորտից՝ առնչվելով երկրի պետական կառավարման և հասարակական կյանքի տարաբնույթ հարցերին:

---

[29] Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2006, VIII; 3,11: Քսենոփոնը հաղորդում է նաև, որ մոգերը հիմներ էին երգում ծագող արևի և բոլոր հայտնի աստվածների համար: Տե՛ս նույն տեղում, VIII, 1, 23:

[30] Հերոդոտոս, VII, 113; VII, 191; Քսենոփոն, Կյուրոպեդիա, IV, 5, 14; VII, 3, 1, VII, 5, 57:

[31] Агафий, О царствовании Юстиниана, пер. М. В. Левченко, Москва-Ленинград, 1953, II, 26.

Մոգերը երկրպագում էին չորս տարրերին՝ կրակին, օդին, հողին, ջրին[32], որոնցից կրակն առավել հարգի էր[33], այդ պատճառով բարձր տեղերում կառուցում էին կրակատներ՝ գիշեր ու ցերեկ այն անշեջ պահելու համար: «… Մոգերն այն պահպանում են անշեջ՝ առանձնացված սուրբ շինություններում և նայելով նրան, կատարում են գաղտնի կրոնական ծիսակատարություններ և գուշակում ապագան»[34]: Մոգերը հագնում էին սպիտակ պատմուճան, չէին կրում ոսկի կամ այլ զարդեր, «…անկողին նրանց համար ծառայում էր հողը, սնունդ՝ բանջարեղենը, պանիրը, կոպիտ հացը[35], գավազան՝ եղեգը…»[36]: Պերսեպոլիսի ապադանայի պատին պահպանվել է մարական մոգերի բարձրաքանդակ, որը հնարավորություն է տալիս տեսնել նրանց արտաքինը. մոգի գլխին դրված է թաղիքե գլխարկ, բերանը ծածկված է, ձեռքին կա ծիսական առարկա[37]:

Մոգերն իրենց կյանքը կառուցում էին աստղային երկնքի շարժման և տիեզերքի բարոյական-էթիկական օրենքների համաձայն: Մոգերից գրավոր աղբյուրներ չեն պահպանվել, քանզի նրանք նախապատվությունը տալիս էին բանավոր խոսքին՝ համարելով, որ գիրը գտնվում է Ահրիմանի[38] ազդեցության տակ: Դիոգենես

---

[32] «… Արեգակը, լուսինը, աստղերը, կրակը, ջուրը, հողը, որոնք մոգերի և հեթանոսների կողմից պաշտվում են»: Տե՛ս Եզնիկ Կողբացի, Եղծ Աղանդոց, գլուխ I, Երևան, 1970, էջ 34:

[33] Մոգերը զոհաբերություններ էին անում բաց երկնքի տակ՝ հավատալով, որ կրակն ու ջուրը աստվածության խորհրդանիշներ են: Տե՛ս Clement of Alexandria, The Exhortation to the Greeks, V, p. 147.

[34] Агафий, II, 25: «Մոգերը աստվածներ էին համարում կրակը, հողը և ջուրը, մերժում էին աստվածների պատկերները՝ հատկապես տարբերակումը արականի և իգականի» (տե՛ս Диоген Лаэртский, I, 6):

[35] Զրադաշտականության վերաբերյալ տեքստերում մոգերի բուսակերներ լինելու մասին որևէ խոսք չկա: De Jong A., նշվ. աշխ., էջ 395:

[36] Диоген Лаэртский, I, 7.

[37] Հաոմայի պատրաստման ծիսակարգի, մոգերի հագուստի, ծիսական առարկաների և այլ մանրամասների մասին տե՛ս Дандамаев М. А., Луконин В. Г., նշվ. աշխ., էջ 318-319:

[38] Զրադաշտական կրոնում Ահրիմանը համարվել է չարի աստվածը:

Լաերտացու հաղորդումներից երևում է, որ մոգերը եղել են բազմագործառույթ անձինք՝ հանդես գալով և՛ որպես գիտնական-փիլիսոփաններ, և՛ գուշակ-մարգարեներ, որոնք զբաղվում էին տարատեսակ հմայություններով: Նրանք երգում էին հիմներ ու բացատրում բնության երևույթները:

Սկզբնաղբյուրները տարբերակում են մոգերին մյուս մարդկանցից՝ փաստելով, որ նրանք տարբերվում էին նույնիսկ Եգիպտոսի քրմերից. «Այս վերջինները սուրբ են համարում չսպանել ոչ մի շնչավոր, այլ միայն այն, ինչ պետք է զոհաբերվի. մինչդեռ մոգերն իրենց ձեռքով սպանում են ամեն ինչ, բացի մարդուց և շնչից, և մեծ ծառայություն համարում այն, որ սպանում են մրջյուններ, օձեր և այլ սողուններ ու թռչուններ»[39]:

Փաստորեն, անտիկ աղբյուրներում բավականին շատ տեղեկություններ կան մոգերի մասին, և անկախ նրանց վերագրվող հատկանիշներից, պարզ է դառնում, որ մոգերը հին աշխարհում ունեցել են կարևոր դեր ու նշանակություն, հակառակ դեպքում նրանց գործունեությունն ու ուսմունքը չէին դառնա քննարկման առարկա:

Սակայն քննարկել «մոգ» տերմինի նշանակությունը և մոգերի դերն ամբողջ անտիկ ժամանակաշրջանի համար, թերևս դժվար է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ալեքսանդր Մակեդոնացու արշավաքներից հետո նրանց ուսմունքը ենթարկվել է որոշակի փոփոխությունների: Չնայած տեսակետների բազմազանությանը, ակնհայտ է, որ մոգերը սկզբնապես ցեղի անվանում է եղել, ցեղայինկրոնական կազմակերպություն, այլ ոչ թե քրմական դասի անուն[40]: Այսինքն՝ այդ ցեղի ոչ բոլոր անդամներն են եղել քրմեր:

Սկզբնաղբյուրների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ ի սկզբանե մոգերը եղել են քրմական գործառույթներ կատարող մարական ցեղ: Չնայած մոգերը ծագումով մարական ցեղ էին, բայց այդ բառով հաճախ կոչվում էին պարզապես քրմերը՝ անկախ

---

[39] Հերոդոտոս, I, 140:

[40] Хорикян О., նշվ. աշխ., էջ 130:

էթնիկական պատկանելությունից[41]: Հետևաբար, այն տեսակետը, որ մոգերի մեջ եղել են նաև պարսիկներ, ավելի քան հավանական է: Ըստ երևույթին, պարսից քրմական դասի որոշ ներկայացուցիչներ կոչվել են մոգեր, իսկ զրադաշտականության տարածմանը զուգընթաց նրանք սկսել են մեծ դեր խաղալ ոչ միայն երկրի կրոնական, այլև աշխարհիկ կյանքում: Եվ քանի որ կրթված մարդիկ միշտ էլ պահանջված են, մոգերը՝ որպես գիտակներ, պետության մեջ ձեռք բերեցին լուրջ դեր ու նշանակություն: Նրանք հանդես էին գալիս որպես գիտնականներ, տեսաբաններ, դիվանագետներ, կրոնահոգևոր հարցերով զբաղվող մարդիկ, որոնք հին աշխարհում վայելում էին մեծ հեղինակություն՝ գրավելով սոցիալական բարձր կարգավիճակ: Երկրի գերագույն առաջնորդը մեծ վստահություն ուներ մոգերի նկատմամբ, ուստի ոչ մի կարևոր հարց չէր վճռվում առանց մոգերի հետ խորհրդակցելու. նրանք առաջնորդում էին թագավորներին՝ նրանց առջևից տանելով սրբազան կրակը: Ինչպես կրոնահոգևոր, այնպես էլ հասարակական-պետական կյանքի բոլոր հարցերը այս կամ այն կերպ առնչվում էին մոգերի հետ, հետևաբար, ոչ մի բան օրինական ու արդարացի չէր համարվում առանց նրանց հավանության:

[41] Նույն տեղում, էջ 130-131:

ANI NAHAPETYAN

(SHSU)

THE RECORDS ON MAGI IN ANCIENT SOURCES

There is quite a lot of information about magis in an ancient sources, regardless of their attributes. It becomes clear that the magis had an important role and significance in the ancient world, otherwise their activity and doctrine would not become a subject of discussion. From the very beginning magis have been a Median tribe, who carried out the functions of priests. Although the magis were a Median tribe, they were often called priests, regardless of their ethnic origin. Consequently, the idea that there were Persians among Magis was quite possible. Magis presented themselves as scholars, theorists, diplomats and people dealing with religious issues, who had great respect in the Ancient World and gaining social prominence.